

նում է և «Ճանապորհորդական նկատողութիւնք» աշխատութիւնս:

Սակայն հետեւեալ գլխում մի քանի խօսք ևս նուիրելով Վայոց ձորի հայ ժողովրդի գաղթականութեան տնտեսագիտութեան, և կեանքի այլ և այլ երևոյթներին, կաւարտեմ վերջնականապէս սոյն աշխատութիւնս:

(Շարունակութիւնը յետոյ)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ.

ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԸՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ 1

Պ.

Նորից չորրորդ գրքի մասին. — Խորենացու մի նոր ձեռագիր գրութիւն՝ Բաղէշի Ամրդոլու վանքում. — Այդ ձեռագրի յիշատակարանները. — Խորեն. Պատմութեան գրքերի թիւը մի յիշատակարանում. — «Թարգմանութեան» օրինակներ այդ ձեռագրի Աղիշէից:

Երկրորդ յաւելում. Խորենացու չորրորդ գրքի գոյութեան վկայութիւններից մէկն էլ է Բաղէշու Ամրդոլու վանքում գտնուող Խորենացու իւր թէ ամբողջ ձեռագիրը, հանդերձ չորրորդ գրքով, Այս մասին յիշում է Հ. Ալիշան, 40 տարի առաջ, իսկ Հ. Սրուանձտեան այդ վանքի գրադարանի մասին տալիս է մեզ հետեւեալ հետաքրքրական ծանօթութիւնը. «Համալուար է սոյն մատենադարան, ցոյց չեն տար այլոց. դուրս եղածները միայն տեսայ ես» 2): Մեզ անհնարին է անշուշտ ստուգել որ և է ճանապարհով այդ՝ Ամրդոլու վանքի չորրորդ գրքի լինել կամ չլինելը, բայց դրա փոխարէն տալիս ենք ընթերցողներին նոյն այդ վանքում գրուած Խորենացու մի այլ ձեռագրի յիշատակարանները, Այս վերջին ձեռագիրը չգիտենք որչափ ժամանակից ի վեր գտնուում է Մայր Աթոռիս գրադարանում, 2463 թուահամարով: Ինքը կա-

1) Տես «Արարատ» 1891, փետրուար:

2) «Թորոս Աղաթ» Բ. մասն, եր. 262, Կ. Պոլիս, 1884:

չեկազմ է: կոկուած դեղնաւուն թղթի վրայ գրուած: ընտիր գրչութիւն. սկզբումն ունի մի մագաղաթեայ թերթ երկաթագիր (աւետարանից): գիրքը 19×25 հարիւրամետր: Այս ստուար ձեռագիրը հաւաքածոյ է Պատմութեանց, Բովանդակութիւն է՝ Ագաթանգեղոսի պատմութիւն, Դաշանց թուղթ, Մեծին Ներսիսի վարքը, Պատմութիւն Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Եղիշէի, Պատմութիւն Ղազարայ Փարպեցւոյ, Թուղթ Ղազարայ առ Վահան Մամիկոնեան, Պատմութիւն Սերէոսի: Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ Կորեան: Այս վերջին երկուսը վերնագիր չունին: Այս և սրա նման հաւաքածուն կարգացողը առանց սուտ խօսած լինելու կարող էր ասել, ըստ վկայութեան Հ. Ալիշանի. «յառաջ քան զսակաւ ամս յԱմբրոտլու վանս ի Բաղէշ հանդիպեալ գրոցն (Մովս. Խորենացւոյ) և ընթերցեալ զպատմութիւնն ցԶեւոն կայսր 1)»: Սոյն ձեռագիրն ունի և մի քանի պատկեր և բաղմաթիւ զարդեր լուսանցքում և գլխակարգութեանց սկզբին: Առաջին պատկերի տակ գրուած է. «յիշեայ զիս տէր իմ և ստեղծող, զվանեցի Սահակ ծաղկող»: Առաջին յիշատակարանին հանդիպում ենք Ագաթանգեղոսի մէջ. «զՎարդան վարդապետն զԲաղիշեցին՝ յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք իւրն և ծնողաց իւրոց՝ որ ետ գրել զսա յիշատակ իւրն և եգ ի դուռն սուրբ Յովնիսայ: Եւ զիս զմեղաւոր Պօղոս սուտ երեցս: որ եմ գծող սորա, աղաչեմ յիշել ի տէր և գութ յիշողքըդ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի»: Մի այլ տեղ՝ «Ով եղբարք և հոգեւոր հարք և սպասաւորք և քարոզիչք Բանին Աստուծոյ, որք ընթեռնուք զայս գիրքս՝ և հոգեւոր բանս օգտիք ի սմանէ: յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զՎարդան վարդապետն զԲաղիշեցին և զիս զՊօղոս երեցս զԳաւըռցիս: որ եմ գծող սորա»:

Սրբոյն Գրիգորի վարդապետութեան վերջում. «Քրիստոս Աստուած, բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Գրիգորի Առնաւորչին ողորմեա ստացողի գրոցս Վարդան քաջ և սրբասէր վարդապետին և իւր ծնողաց՝ հօրն Եղիային և մօրն՝ Ղարիպին և եղբարցն Խաչատուրին և Խօշխարարին: Եւս առաւել հոգեւոր ծնողին իւրոյ Խաչատուր բարունապետին և հոգեւոր որդոց իւրոց Աբրահամ վարդապետին և Սարգիս պատանեկին: Զի յոյժ սիրով և փափաքանօք ետ գրել զգիրքս զայս յիշատակ իւրն և ծնողաց իւրոց: յիշելով զբան մարգարէին որ ասէ. երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, այսինքն՝ յեկեղեցի, և ընդանեակս ի վերինն երուսաղէմ: Արդ՝ աղաչեմք զձեզ ով հոգեւոր հարք և սիրելի եղբարք՝ որք հանդիպիք այս

1) Բաղմագէտ, 1851, եր. 72:

սուրբ տառիս՝ ինչ կերպիւ և իցէ, թէ կարգաւով թէ օրինակ գնելով և կամ հարեանցի տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՎարդան քաջ և բարունի վարդապետն զԲաղիշեցին, որ իբրև զարեգակն փայլէ և լուսաւորէ զխաւարեալ և մեղսասէր մարդիկք՝ ասելով և խրատելով և զամենեսեան դարձուցանէ ի չարեաց քաղցր բարբառովն և աստուածային քարոզութեամբն, զի միշտ և հանապազ ոչ դադարի ի քարոզելոյ և յուսուցանելոյ, Բանդի զբազում ժամանակաց զխանդարեալ և զաւերեալ եկեղեցիսն նորոգեալ կանգնեաց և զոչ եղեալսն շինեաց ի հիմանէ և այլ բազում բարեգործութիւնս արար ի վերայ երկրի, զոր ոչ կարեմ մի ըստ միովէ արկանել ի շարս քարտիտիս, այլ բարեաց հասուցանողն որ տայ սիրողաց իւրոց զիւր անձաւ բարիսն՝ տացէ նմա և զիւր երկնից արքայութիւնն ի միւսանգամ գալստեանն իւրում և ի կեանս յայս ընդ երկայն աւուրս պահեսցէ զնա, ամէն: Եւ Պօղոս գծօղ սորա աղաչեմ զձեզ, զի յիշման արժան առնէք զիս»:

Դաշանց թղթի վերջում կայ հետեւեալ յիշատակարանը.

«Արդ՝ ես Վարդան վարդապետս Բաղիշեցիս ցանկացայ բարի աւուրցն որ միշտ արծարծէր շնորհք Հոգւոյն սրբոյ յարժանաւորս իւր. սիրոյ նոցին և աղօթիցն տենչացայ, Եւ ետու գրել զպատմութիւն սուրբ կաթողիկոսացն և թագաւորացն, զի աղօթիւք նոցա ողորմեսցի Քրիստոս Աստուած մեզ և մերոցս ամենայնի, հօրս իմոյ Եղիային և մօրս Ղաւրիպին և եղբարցս Խաչատուրին և Խօշխապարին և զաւակաց նոցին, Եւ ևս առաւել հոգեւոր հօրս իմոյ և ուսուցչի՝ Խաչատուր մեծիմաստուն և փիլիսոփայ վարդապետի՝ Խաչատուր Բաղիշեցոյն, որ յայսմ ամի որ ըզգիրս ետու ծրել՝ Թ. ամաւ յառաջ փոխեալ է առ տէր: Եւ նորաբողոք հոգեւոր որդոցս իմ՝ Աբրահամ վարդապետի Համթեցոյն և Սարգիս փոքրը պատանեկին և միաբան եղբարցն ամենեցուն որ կան ի սուրբ ուխտս Յովհաննու Մկրտչի, ի ծառայութիւն սուրբ խորանացս և ի սպասաւորութիւն մեզ, որ մականուամբ Ամրդօլու վանք ասիւ: Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ հարք մեր և եղբարք, որք ընթեռնուք և հոգեւոր բանս օգտիք ի սուրբ գրոցս, բոլոր հաւատով աստուած ողորմի ասացէք ինձ Վարդան վարդապետիս և գծագրողի սորա հոգեւոր որդւոյ իմոյ՝ տէր Պօղոս երիցու Դաւրոցոյ և դուք յիշօղբդ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի, ամէն: Գրեցաւ ի Ռ. և ի Ը. և ի Ե. Թվին (1121=1672):

Խորենացու Ա գիրք, 5 գլխում. «ԶՊօղոս մեղապարտ երէցս յիշման արժանի արա, ոտիցդ հող եմ և փոշի»: Փոքր ինչ ներքեում. «ԶՎարդան վարդապետն. . . և Պօղոս գծօղս զոտդ կու համբուրէ որ թէ յիշման արժան առնես»: Փոքր ինչ յետոյ. «Դարձեալ յիշեցէք. . . և այլն»: 19 գլխում՝ «Արդ՝ յիշեցէք. . . զՎարդան վարդապետն բաղիշեցին որ ետ գրել զպատմա-

գիրքս . . . և այլն»։ Խորենացու մէջ լուսանցքում և էջերի ստորեւում կան նշանակուած նոյն գրչով ուղղութիւններ և տարբեր ընթերցուածներ։ Երկրորդ հատորի ցանկից յետոյ. «զՎարդան . . . յիշեցէք . . . և Բաբոնենց Յովհաննէս վարդապետին և ինձ . . . »։ Երկրորդ գրքի վերջում. «Արդ՝ յերես անկեալ աղաչեմ զձեզ ո՛վ սուրբ հարք և վարդապետք և իմաստուն ընթերցողք այսմ տառիս՝ զի յիշման արժանեք զխորին փիլիսոփայն և զհոգիւնկալ վարդապետն զՎարդան Բաղիշեցին, որ յայսմ ամի ի հալածանս է յանիծեալ ազգէն մահմետականաց՝ յերկիրն Սուրացոց, որ այժմ Հազու վերաձայնի։ Որ յայսմ հալածանաց միջի ետ գրել զգիրս յիշատակ իւրն և ծնողաց իւրոց։ Եւ ևս Պօղոս սուտ երէցս որ եմ՝ գծօղ տառիս աղաչեմ զձեզ զի յիշման արժան առնէք զիս»։ Խորենացու վերջում. «փառք . . . Որ կարողացոյց զիս ծրագրել զպատմութիւն թագաւորացն մերոց ի Յարեթէ սկսեալ մինչ ի Սահակ հայրապետ Պարթէն։ Աղաչեմ զձեզ զամենեւեան յիշելոյ և թողութիւն խնդրելոյ . . . Եւս առաւել զհոգեւոր հայրն նորա զԽաչատուր քաջ վարդապետն զբաղիշեցին և զԲաբոնենց Յովհաննէս վարդապետն. որ նա ևս բաղում աշխատութիւն ունի ի վերայ նորայ, ի գրոց սերտրցուն։ Եւ զիւր աշակերտն զԱբրահամ վարդապետն զՀամթեցին . . . : Թողութիւն արա՝ խիստ եմ նեղացեր»։ Մեծին Ներսիսի կենսագրութեան մէջ երկու տեղ այսպէս. «ով եղբայր, այս բանքս պակաս է, ի նշանած տեղն պիտի, ահա ի Ներսիսի պատմութեան վերջն գրեցայք, բաց և կարդա՛ւ»։ «Եւ այս ևս պակաս է՝ ի վերջն պատմութեանս գիտ . . . »։ Եւ զայս ևս ի վերջ պատմութեանս գտցես»։ Սրբոյն Սահակայ տեսիլքից առաջ. «Զբազմամբէր հոգիս՝ և զաղքատս ի բարեաց և զլրացեալս ի չարեաց՝ զՊօղոս գրիչս՝ զտարտամեալս և զտարագրեալս ի կենաց կտակէն, պատահողք սմա յիշման առնէք արժանի։ Եւս և զստացօղ տառիս՝ ըզՎարդան վարդապետն և զիւր ծնօղն և զամենայն երախտաւորքն իւր, և դուք յիշողքդ՝ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի, ամէն»։ Այս՝ Պօղոս գրչի վերջին խնդրուածքն է, սրանից յետոյ շարունակում է նա ընդօրինակել, բայց չէ ատիկում նոր յիշատակարան գրել. ընդօրինակում է ամբողջ Եղիշէն և Եղիշէի յիշատակարանը, որը կիսատ է մնում, ամենահաւանականաբար վրայ հասնելով «խիստ նեղացած — յոգնած և տարտամեալ» Պօղոս գրչին հիւանդութիւն և մահ։

Հաւաքածուն շարունակում է նոյն Վարդան վարդապետի համար ուրիշ գրչի ձեռքով, Եղիշէի վերջում դրուած այդ յիշատակարանը, որ մեր կարծիքով Պօղոս գրչի շարագրածը չէ և ոչ էլ Վարդան վարդապետինը, այլ Եղիշէի հին օրինակից ընդօրինակութիւն է և թէև թերատ և անթուա կան, այլ դարերով առաջ Պօղոս գրչի ժամանակից, որին վկայում է իւր

ընտիր և վայելուչ հայկաբանութիւնը, իսկապէս մեզ ամենից շատ հետաքրքրողն է, որովհետեւ դրա մէջ յիշուած են ի թիւս այլոց Խորենացու Պատմութեան բովանդակութիւնը և երեք գրքի տրոհումը ինն լը:

Ահա այդ գեղեցիկ յիշատակարանը ամօղջապէս. «(Փ)առք հօր անսկզբան՝ և որդւոյ անսկզբան և սկզբան և սրբոյ հոգւոյն անքննաբար ի նոցունց էութենէ անհատաբար և անսպառ բղիմանն, եռատրոհ անձնաւորութեանն, եզարուն բնութեանն, միակամ և միահեծան իշխանութեանն, ամենակալ և անվախճան թագաւորութեանն, միասնական ամենասուրբ երրորդութեանն, յամենից շնոց կենդանեաց՝ իմանալեաց և զգալեաց, որ յանէից եղեալ գոյացան, ի նորին զարհուրելի հիասրաշ հրամանացն և ի լրումն նորայն կամաց, անհատ և անվճար օրհնութիւն, գոհութիւն և անդադար փառաբանութիւն, ի վեր քան զմիտս և անդր քան զպայմանքն՝ անեզր յաւիտենիւ և յաւիտենի յաւիտենից. ամէն:

Արդ՝ զի որպէս երիս երրեակս իմացուցանեն դասակարգութիւնս հրեշտակաց ի միտս մեր գիրք աստուածայինք՝ գոյ փառաբանիչս ստեղծագործողին իւրեանց, այսինքն՝ անմարմին զուարթունք, նոյն ձևով տարազու երիս կարգադրութիւնս տեսանի ի սուրբ եկեղեցի, որ ճշմարտապէս երկին է ի յերկրի, առ ի պայծառութիւն և ի լուսաւորութիւն ընդ հանուր տիեզերածաւալ մարդկութեանս սեռի: Նա և ի փառաբանութիւն մարմնաւոր տնօրէնութեան միածնի մարդացելոյ Բանին Աստուծոյ, առ ի քարոզել և հռչակ հարկանել զփրկութիւնն և զերախտիսն Աստուծոյ, որ ի նմանէն ի մեզ ծաւալեցաւ: Եւ այս ո՛չ ի ձեռն հրեշտակաց և անմարմին գերաշխարհիկ զինուորութեանց, այլ ի ձեռն հազարապետացն Աստուծոյ, Քրիստոսի ասեմ առաքելոցն, զոր յօրինեալ շարակարգէ ընտրեալն և զարմանալին այն Պօղոս, յիւրականն թխտի ասելով. Եւ զորս եգ Աստուած յեկեղեցւոջ այս են: Նախ՝ զառաքեալսն, երկրորդ՝ զմարդարէս, երրորդ՝ զվարդապետս: Եւ այս ո՛չ վարկապարզի և ունայն գոյ, որք դասեցան մի գլինի միմեանց, այլ խորհուրդ իմն յայտնեալ տեսաւին ի նոսա: Ասան զի համաքատակ և նմանասարաս են լուսաւորացդ, որ յերկինս, արեգականն՝ առաքեալք, և լուսնին՝ մարդարէք և աստեղաց՝ վարդապետք: Եւ որպէս զանաղան են լուսաւորութիւնք լուսաւորացդ, ոմն զցայգ և ոմն զցերեկ, այսպէս են և բանք տեսանողաց և լուսատուաց հոգւոց մերային զարմից: Եւ որչափ էր կար և հնար նոցին, լուսաւորեալ պայծառացուցին և զխաւար տգիտութեան ի միգապատ և ի մռայլատեսակ մտաց մարդկայինս ազգի փարատեցին և (լուսանցքում՝ միշտ) փարատեն: Եւ ունին վարդապետք զնմանութիւն մարդարէից և զտիպառաքելոց. զի որպէս նոքա ի հնումն զինչ և պատահէր ազգին իւրեանց

զնոյնն մարգարէանային, եթէ տրտմականս և թէ ուրախականս, որպէս նոցին իսկ բանքն յայտ առնեն, այսպէս և վարդապետք եկեղեցւոյ՝ ժրացեալք ի սուրբ Հոգւոյն, քարոզեն առաքելաբար և մատուակեն զգինին ուրախարար, և սերմանեն զբանն կենաց ի սիրտս հաւատացելոց և արբուցեալ ոռոգանեն ջրովն աստուածային զպասքեալ հոգիս բանաւորաց, եւ թէ նեղութիւնս ինչ՝ և մրրիկ դառնութեան եկեալ ժամանէ յանօրինաց և յայլադէմ անաստուած բռնաւորաց, և կամ այլ իմն ուղիսաձև փորձութիւնս զիւական՝ ի վերայ հաւատացելոց, յառնեն իրրեւ զմարգարէ՝ և պատմեն զանցս աղետից և զկսկիծս թշուառութեան որպէս զերեմիայ և կամ իրրեւ զմի ի մարգարէիցն՝ իւրաքանչիւր ոք իւրում ազգի, վասն որոյ և երրորդ զկնի առաքելոց և մարգարէից դասեալ կարգեցան, եւ որպէս աստղ քան զաստղ առաւել է փառօք՝ նոյնպէս և վարդապետ քան զվարդապետ՝ բանիւք գիտութեան և վարուք առաքինութեան։ Որպէս այլք այլոց ազգաց են պատմողք, նոյնպէս ազգիս մերոյ և զարմի են պատմիչք և վիպասանք՝ կորովիքն և քաջաբանքն, անյաղթ փիլիսոփայքն և յոգնահանձար և առատամիտ փաղերայքն 1)։

Նախ՝ Ագաթանգեղոս քաջ քարտուղարն՝ որ հրամանաւ թագաւորին Տրդատայ զսուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի զերաշխեսպն ի կիրարկեալ թուէ, թէ որքանաբար անըմբերելի կարծրագոյն տանջանաց և սարսուռի չարչարանաց և կրից տարեալ համբերեաց, և ապա թէ որքան ժամանակս յամեալ ի վիրապն խոր և անդնդային։ Ուրանաւ իրր յարգանդի մօր զմերն լինէր յղացեալ զփրկութիւն, ուստի արեգակնասարաս ելեալ ծագեցաւ և լուսաւորեաց զխաւարամած երկիրս Հայաստանեայց, և ծնաւ վերստին, ըստ ասացուածոյ մարգարէութեանն, զազգ մի ողջոյն, և այսպէս պատմաբանելով տարեալ զբանն յանկ ածէ ի փառս Աստուծոյ։

Եւ ապա զկնի նորին, մեծի մաստն Մովսէս քերդոդահայրն, գեղեցկապէս և հարուստի մաստուութեամբ սկսեալ զպատմութիւնս Հայոց, կարճ բանիւք և մանուածոյ բառիւք, բայց ընդարձակ մտօք, տրոհեալ ի հատորս երիս, հասուցանէ զբանն առ մեծն Իսահակ և Մեսրօպ, և անդ զաղետալի ողբսն ասացեալ սակս ամայութեան աշխարհիս և երկուց դաւազանաց՝ դադարէ ի փառս Աստուծոյ։

Եւ ապա ընկերք նորին. Եղիշէ վարդապետն որ Վարդանանց զիրսն՝ և

1) Այս բառն առաջին անգամ է հանդիպում մեզ այս հատուածում, թերեւս նշանակէ «լուսամիտ», փալլուռ, ըստ յունականին՝ Φαλλου, Համեմատիր «փաղերութիւն» բառի հետ։

զքաջապէս նահատակութիւնսն ճառեաց: Եւ Ղազար Փարպեցի, պատմագիր և ճարտասան, զնոյն ոճ երկրորդեաց: Եւ այլք յոգունք, որք մի զկնի միմեանց յանցնիւր ի դարս և ի ժամանակս պատմաբանեցին՝ և արձան յիշատակի յետ իւրեանց կենդանի թողին: Չորս բաղմաց և յողովից բաղմամբէս պատմութեանց աստուածային որեարցն, որք ասացան . . . »

Այս տեղում ընդհատուած է այս գեղեցիկ յիշատակարանը, որն այնչափ մեղ ծանօթ է թուում, որ կարծես թէ կարդացել ենք մի այլ տեղ և այս ծանօթութիւնը, անշուշտ, հետեանք է այս հատուածի լեզուի արծաթի դարու հայկաբանութեան հետ ունեցած քիչ թէ շատ նմանութեանը:

Այսպէս կամ այնպէս, այս գրուածքը ոչ մէկ դէպքում չէ կարող լինել թէ՛ դարու գործ, և իւր հին վայելուչ հայկաբանութեամբ մի նոր փաստ է ընդդէմ չորրորդ դրքի գոյութեան:

Համառօտենք Վարդան վարդապետ բաղիշեցու հաւաքածոյի մնացած յիշատակարանները: Այս հատուածից յետոյ, ինչպէս արդէն ասացինք, գրչութիւնը փոխուած է, թէպէտ շարունակուած է մնալ բոլորագիր, բայց աւելի անվարժ և տղեղ:

Չէ երևում այլ ևս Պօղոս գրչի սահունութիւնը: Մի տեղ Ղազարայ պատմութեան մէջ էջերի ստորեւում նկատուած է գրիչը. «ի թղթէս է պակաս, և յօրինակն այսպէս էր գրած»: Մի այլ տեղ, Վարդանանց կոտորածից յետոյ. «Աւաղ զշաք յայնմ աւրէ և առ յապայ»: Ղազար Փարպեցու թղթի առաջին երեսի ստորեւում՝ «Ճգնաւոր էր Աղան յազգէն Արծրունեաց, բնակեալ ի յայրն Աղանայ, ի յԱնբերդ»:

Թղթի վերջում կայ յետեւեալ յիշատակարանը.

— «Այժ սուրբ վարդապետ զոր ինչ ասացեր ճշմարիտ է, զի և այժմ նոյնպէս եղև և լինի հանապազ: Ով սուրբ ընթերցաւիք և եղբարք, գիրքս հին էր և աւրինակս, Յունան վարդապետն կարգացեալ էր զաւրինակն և նորոգեալ և զպակասութիւն թղթոցն որ պակասէ ոչ էր գտեալ, և ես ոչ կարացի գտանել. աղաչեմ զամենասեան, եթէ գտցի գիրքս այս ուրեք, գրեսցիք զպակասումն թղթոցս և գիրք ի սմայ, նախ զսկիզբն գրոցս, և յապա յերիս տեղիս թուղթ մի անկեալ կայ, եւ եթէ սխալ գտցիք ի սմա՝ թողութիւն խնդրեցէք ինձ ի Քրիստոսէ յանցանաց իմոց և ծնողաց իմոց, ամէն: Ազգիս մերոյ և յառաջագոյն նախնեաց սրբոց որ երկրորդեցի զգիրքս վասն յիշողութեան սրբոցն ի պարծանս մեր, և անսրբոցն յողբումն թշուառութեան և յամօթ յաւիտենից: Քաջքն զօրասցին ի Քրիստոս, և տկարամիտքն կորանայցեն: Եւ որք լսենն աւաղեսցեն զազգիս մերոյ զտառապանս»:—

«Աւարտեցաւ գիրքս Ղազարու վարդապետի Փարպեցւոյ ձեռամբ

բազմավէր և անարժան Գրիգոր երիցու, ի հարկէ սրբազան և քաջ վարդապետին Վարդան դիտապետի: Արդ աղաչեմ զընթերցողքդ յիշեսցիք, և այլն»: Սերէոսի վերջում նոյն գրչի յիշատակարան. «Զյետինս ի գրւչաց և զառաջինս ի մեղաւորաց, զանարժան, զանարհեստ և զանիմաստ զԳրիգոր երէցս արժանի առնել աղաչեմ . . . և այլն»: Կորիւնի վերջում՝ «Յիշեցէք զքաջ բարունապետն զՎարդան վարդապետն առ Քրիստոս Աստուած, և լի բերանով Աստուած ողորմի ասացէք. նա և եղկելի գրչիս, ամէն»: Այստեղ աւարտուում է այս երկիջեան ամբողջ հաւաքածուն, որի թերթերը չհամարեցինք:

Զանց ենք առնում այս ստուար ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը, թողնելով այդ Մայր Աթոռիս հարուստ և անծանօթ մատենադարանի ապագայ ցուցակ կազմողներին: Սակայն աւելորդ չենք համարում այս ձեռագրի Եղիշէից «Թարգմանութեան» օրինակներ մէջ բերել: Դժուարին և օտարազգի բառերը լուսաւնցքում թարգմանուած կամ բացատրուած են, երբեմն յաջող և երբեմն անյաջող և սխալ: Այս թարգմանութիւնները ժամանակին, եթէ ոչ ամբողջովին, գոնէ մասամբ, իբրեւ սրբագրութիւն կարող էին ներմուծուել բնագրի մէջ, ինչպէս այդ պատահել է տեղ տեղ, մանաւանդ Խորենացու մէջ (տե՛ս մեր Ա և Բ յօդուածները): Առաջին բառերը բնագրից են, իսկ գծիկից յետոյ դրուածները լուսանցքից, կամ երբեմն տողամիջից:

«Քանզի բազում ինչ է սրբութիւն, սատար լինել անօսրութեան — տկարութեան» — «բռնութեամբ յարձակեալ ի վերայ մահու — կամակարութեամբ» (այսպէս է և տպագրում) — «Որդւոյն Տրդատայ — Տիրանայ» (այս չէ թարգմանութիւն, այլ սրբագրութիւն) — «ի վեր քան զմարդկային բնութիւն ընդվիճեալ ապարթանէր (տպ. ապարասանէր) — հակառակէր» — «ցնորեալ դանդաչէր — երկրայէր»: Երկրորդ Յեղանակ. «Միհրներսէհ վզրկ (տպ. վզուրկ) — մեծ» — «երան և տաներան (տպ. երան և աներան) — մեծաց և պատուական» — «Դէնի մազդէզն — հաւատոյ հաւատ» — «խարամանոյ (տպ. նարամանոյ) — պատրողաց» — «Զրուան — Կոնոս կամ Արամազդ» — «յաշտ առնէր — ներգործէր կամ ստեղծագործէր» — «Որմիզդ — անդրանիկ» — «ի կատարեալ դենէս — հաւատոյս» — «Նածարեցիսդ (տպ. նածրացիսդ) — նազօրեցի» — «մեծի սպահիդ Արեաց — հեծելիդ» — «հոծութեամբ — առատութեամբ» — «դեհպետք — գլխաւորք» — «փանդորակայ որդի — հիւսան» — «Եւքրտիկար չառնելով ոյթ տայք իւրաւամանոյն — լուացումն ի փոր չառնելով մուտ տայք դիւաց՝ և հոտոյ գարշութեան» — «Հայայ — ահա զի՞ կայք» — «չկօթակ — տարաշխարհիկ» — «Հայսք առանց փանդանի (տպ. փանդամի)

մի՛ զանգցին—կողպատ երեսացն».—«ձեռք առանց գուժի զոյ մի լուսացին—աւշնան խոտն է».—Երրորդ Յեղանակ. «կեշտք—կրօնք».—«Մովպետական մովպետի (տպ. Մովպետան մովպետի)—պարոնաց պարոնի».—«գերանդերձապետ—փառաշ».—«պատրուճակ — ոչխար».—«կանայք փաստիպանացն (փշտիպանացն)—արսնապահ (?) կանայք մոգունցն».—«անշուշտ կեանք—անսուտ».—«դատամբական—զանիրական».—Զորրորդ Յեղանակ. «սաղաւարք (տպ. սաղարք) — զօրագլուխ».—«լակիշ (ղակիշ) — համագունդ».—Եօթներորդ Յեղանակ. «փշտիպանացն — մարմնապահ կանանցն».—«քրտիկար — պատրոդ»:

Ութերորդ Յեղանակ. «լաշկարաւ վատ ախտարակ արարեալ — միատողով. ի քմի (?) կացեալ».—«դենպետ էր — գլխաւոր էր».—«տեղեակ զրադեշտական օրինաց — բանիրուն ի կարեւոր ուխտ».—«Համակդէն — բոլորից ուսուցիչ».—«գիտէր զԼմբարտքաշն — լուսամիտ».—«Քանդի այս Ե կեշտք են որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեան—ղբ. (ղբալում) մեծամեծաց զգիտութիւն ունէր».—«յիւրաքանչիւր իշտեաց կանգնեցան — դադարեաց».—«հանդէս առաքինութեան—ընտրութիւն».—«ապարասան — անհաւան».—«ետես և ի ձեռին նոցա զանշուշտ ոքունեան պսակն (տպ. զանշուշտ ուսունայն) — զանշարժ».—«Մովպետան մովպետ — իշխանաց իշխան».—«շկօթակ — տարագիր».—«ուսոյցն զմեզ մեծն Զրադէշտն — կարեւոր ուխտ».—«փոխանակիցէ ընդ անարդ թրուշայի — ոչնչի».—«շկօթակ — վրտարանդի».—«ձեռք մեր փապարեալ են — խոշորեալ».—«զի մի, ասեն, ահ դէնքն եկեալ (տպ. զի մի այլադենքն եկեալ) — անհաւատքն».—«տագնապեալք — ցնորեալք»:

Ներողութիւն ենք խնդրում ընթերցողից երկարութեան համար: Այս թարգմանութեանց օրինակները մի գեղեցիկ լուսաբանութիւն են այն կարելի փոփոխութեանց, որոնց ենթարկուած կարող են լինել մեր հին դպրութեան բնագրերը այս ճանապարհով — թարգմանութեամբ:

Միւս կողմից՝ այս օրինակները ցոյց են տալիս թէ՛ յորչափ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել «թարգմանութեան խնդրին», ոչ միայն Խորենացու, այլ նաև մեր բոլոր բնագրերի ուսումնասիրութեան ժամանակ: Պարեմի է երևակայել թէ՛ ինչ մեծ փոփոխութիւն կ'մտնի բնագրի մէջ, երբ մովպետան մովպետի տեղ մուծուած լինէր «իշխանաց իշխան կամ պարոնաց պարոն» և կամ՝ գումիզի կամ կովմէզի փոխանակ՝ օշնան: